

**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 244-Ա**

**11 օգոստոսի, 2020 թվական**

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 7-ի N 1195-Ա, N 1197-Ա և N 1205-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 10-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Իրինա Կյուրղենյան», Արագածոտնի մարզ, գ.Նոր Եղեսիա (ՀՎՀՀ 54660077).
- 2) Ա/Ձ «Էլմիրա Սաղաթեյան», Արագածոտնի մարզ, գ.Նոր Եղեսիա (ՀՎՀՀ 54648451).
- 3) Ա/Ձ «Լիլիթ Հակոբյան», Արարատի մարզ, գ. Այգեստան Խանջյան 1 (ՀՎՀՀ 47900759).
- 4) «Բլեք Սթար 2018» ՍՊԸ, ք. Երևան, Աբովյան 1/3 (ՀՎՀՀ 54660077):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

---

VERIFIED OCSP 11/08/20 19:01:45 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**